ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐՍԵՆ ՔԱՐԱՄՅԱՆԻ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը՝** Արսեն Ռոբերտի Քարամյան
2. **Զբաղեցրած պաշտոնը՝** Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ
3. **Գործուղման վայրը և ժամկետները՝** Բելառուսի Հանրապետություն, Մինսկ, 2018 թ. ապրիլի 11-13-ը
4. **Հրավիրող կողմը՝** ԱՊՀ Գործադիր կոմիտե
5. **Գործուղման նպատակը՝** Մասնակցություն ԱՊՀ մասնակից պետությունների երիտասարդության հարցերի խորհրդի նիստին
6. **Քննարկված թեմաները**
   - ԱՊՀ մասնակից պետությունների մինչև 2020 թվականն ընկած ժամանակահատվածի միջազգային երիտասարդական համագործակցության ռազմավարության իրագործման 2018-2020 թվականների միջոցառումների ծրագրի իրականացման ընթացքը,
   - «100 գաղափար ԱՊՀ-ի համար» ԱՊՀ մասնակից պետությունների միջազգային երիտասարդական նախագծի արդյունքները,
   - ԱՊՀ մասնակից պետությունների միջազգային երիտասարդական համագործակցության 2021-2030 թվականների ռազմավարության նախագծի պատրաստումը,
   - 2018 թվականին ԱՊՀ մասնակից պետությունների երիտասարդական կազմակերպությունների ֆորումի նախապատրաստման աշխատանքները,
   - Խորհրդի հաջորդ նիստի անցկացման վայրը, ժամկետները և այլ օրակարգային հարցեր:
7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Նիստի ընթացքում ներկայացվեցին Հայաստանի Հանրապետությունում ԱՊՀ մասնակից պետությունների մինչև 2020 թվականն ընկած ժամանակահատվածի

միջազգային երիտասարդական համագործակցության ռազմավարության 2018-2020 թթ. միջոցառումների ծրագրի շրջանակներում կազմակերպվող միջոցառումները:

Կազմակերպվեց այցելություն «100 գաղափար ԱՊՀ-ի համար» ԱՊՀ մասնակից պետությունների միջազգային երիտասադական նախագծի ցուցահանդես, ինչպես նաև՝ հանդիպում նախագծի հայկական պատվիրակության հետ, իրականացվեց նախագծի հաղթողների պարգևատրում:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Ընդունվեցին հետևյալ որոշումները.

- Երիտասարդության հարցերի բազային կազմակերպությանը խնդրել՝ ստեղծել «100 գաղափար ԱՊՀ-ի համար» նախագծի մասնակիցների և գաղափարների համակարգված հենք,
- Անդամ երկրներում աջակցել «100 գաղափար ԱՊՀ-ի համար» նախագծի կանոնակարգի հաստատմանը,
- Հավանության տալ ԱՊՀ մասնակից պետությունների միջազգային երիտասարդական համագործակցության 2021-2030 թվականների ռազմավարության նախագծի՝ աշխատանքային խմբի կողմից մշակված կառուցվածքին,
- Հավանության տալ ԱՊՀ մասնակից պետությունների երիտասարդական կազմակերպությունների ֆորումի կանոնակարգին,
- Օրակարգային հարցերի վերաբերյալ այլ որոշումներ:

Որոշվեց նաև ԱՊՀ մասնակից պետությունների երիտասարդության հարցերի խորհրդի հերթական նիստն անցկացնել 2018 թվականի նոյեմբերին Հայաստանի Հանրապետությունում:

9. Գործուղվողը՝ Արսեն Ռոբերտի Քարամյան

Ստորագրությունը, ամսաթիվը

Արսեն Ռոբերտի Քարամյան

16.04.2018 թ.